

Սառնադբյուր

Վարչական ղեկավար՝

Դերենիկ Վարդանյան

Հեռ՝ 093-09-27-94

Մակերես՝ 64.87կմ²

Բնակչություն՝ 3298

sarnaghbyur.shirak@mta.gov.am

Համայնքի ներկայիս անվանումը – Սառնադբյուր

Համայնքի պատմական անվանումները - ՈՒռենուտ, Սոզյութի

Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը – 1829-1830թ.թ. Արևմտյան Հայաստանից

գաղթած ընտանիքների կողմից:

Որ համայնքներին է սահմանակից համայնքը – Լանջիկ, Զորակապ, Լեռնակերտ,

Գառնահովիտ

Համայնքի մակերեսը - 6487.9 հեկտար

Հեռավորությունը մայրաքաղաքից - 100կմ

Հեռավորությունը մարզկենտրոնից - 35 կմ

Բնակչության թիվը - 3401 մարդ

Բնակչության կազմը - հայեր-3398մարդ

այլ /մոլովացի / - 3

Կրթական հաստատություններ – <<Սառնադբյուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

<<Սառնադբյուրի նախադպրոցական ուսումնական
հաստատություն>> ՀՈԱԿ

Մշակութային հաստատություններ - Սառնադբյուրի մշակույթի տուն/ վերակառուցման
ենթակա/

Համայնքի մասին գրքի առկայություն - Ռ.Գևորգյան <<Ակունք>>

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ - Գյուղում կա նաև հնավայր, Կալաջի կամ Ղալաջի կոչվող բլրի վրա առկա են
բազմաթիվ վկայություններ հնավայրի գոյությունը ապացուցող, սակայն առաջման այն ոչ մի
հնագիտական ուսումնասիրությունների չի ենթարկվել: Գյուղի անվանացանկում կարելի է թվարկել
նաև Գյողյիքենդի և Սյողութի կամ Սոզքըլու անունները, որոնք տրվել են թուրքերի

կողմից 1918 թվականի մայիսյան հերոսամարտերի ժամանակ, ի դեպ պետք է փաստել, որ գյուղը
բավականին լուրջ դիմադրություն է ցույց տվել թուրքական ջարդարաններին 1918 թվականի մայիսի 18-
23 կամ 24-ը ընկած ժամանակահատվածում: Այս դեպքերի վերաբերյալ կան բազմաթիվ
վկայություններ: Գյուղը բավականին մեծ տարածք ունի:

Սառնադբյուր գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի հարավ-
արևելյան մասում, ծովի մակարդակից մոտ 2000մ բարձրության վրա. Գյուղը ունի մի շարք
պատմական կոթողներ, որոնք հավանաբար վկայում են, որ գյուղի տարածքը նախկինում բնակեցված
է եղել:

Գյուղի կենտրոնում են գտնվում սուրբ Թաղլոս (1883 թ.), սուրբ Հակոբ (V-VI դարեր) և Սուրբ

Կարապետ ([1205](#) թ.) եկեղեցիները: Գյուղի մոտ են գտնվում V-XIII դարերի Հռոմեականքը, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ուխտատեղին, իսկ 6 կմ արևելք՝ Սուրբ Ղազար [եկեղեցին](#) (V-VI դարեր), «Գնդաքար»

(մ.թ.ա. 1-ին հազարամյակ) և «Բերդիկ» (մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակ) ամրոցները: [1883](#) թվականին կառուցվել է Թաղեսու Առաջալ Եկեղեցին, որը այժմ գործող է:

Սառնադրյուրում են գտնվում մի շարք սառնորակ աղբյուրներ: Դրանցից հիշարժան են «Կաթնով աղբյուր», «Թմոյի աղբյուր», «Զորի Աղբյուր», «Կանալ», «Բողի աղբյուր» և այլ աղբյուրները:

Սառնադրյուրում գտնվում է նաև քարհանք, որտեղ կա վարդագրույն [տուֆ](#) և [ավազի](#) հանք «Բողթու» անունով: Տարածքում կան տուֆի և [պեմզայի](#) հարուստ պաշարներ:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

Գյուղն ունի [արհեստական ջրամբար](#), որը ոռոգում է Անիի տարածքի

1000 [հեկտար](#) հողատարածությունը:

- [Հայկարամ Միհիթարյան](#), Նախկին ԱԺ պատգամավոր, «Հայմամուլ» ՓԲԸ գլխավոր տնօրեն, ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարիչ, ՀՀ նախագահի աշխատակազմի գործերի կառավարիչ, ներկայումս՝ ՀՀ ԱԻՆ փոխնախարար
- [Արշալուս Սարոյան](#)
- [Գուրգեն Սահակյան](#)
- [Սամվել Նիկոյան \(ծ. 1958\)](#), ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահ, քաղաքական գործիչ: